«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Գնահատում : Ինքնագնահատում և փոխադարձ գնահատում

ԱՌԱՐԿԱ՝ Մաթեմատիկա

ՀԵՂԻՆԱԿ՝ Արշալույս Ենոքյան

ՄԱՐԶ՝ Արմավիր

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ «Տարոնիկի միջն. դպրոց» ՊՈԱԿ

Վաղարշապատ 2022թ

Բովանդակություն

1. Նախաբան …… 3-6 էջ
2. Հետազոտական համատեքստ …… 6-7 էջ
3. Գործնական համատեքստ …….. 8-11 էջ
4. Հետազոտական ընթացք …….. 11-13 էջ
5. Տվյալների մշակում և վերլուծություն …… 14-15 էջ
6. Ամփոփում (եզրակացություն) …….. 16-17 էջ

Նախաբան

Գնահատումը սովորողի մասին տեղեկություն ստանալու, հավաքելու, վերլուծելու և դրա հիման վրա հանրակրթության բովանդակային և կազմակերպչական աշխատանքների արդյունքներն ի մի բերելու և վերահսկելու գործընթաց է:

Գնահատման հիմնական նպատակը սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների յուրացման ու տիրապետման աստիճանի, նրանց անձնային որակների ստուգումն է, ինչպես նաև ուսման որակի բարելավումն ու վերահսկումն է:

Գնահատման գործընթացը պետք է պայմաններ ընձեռի սովորողներին իրենց գիտելիքների և ներուժի արտահայտման համար: Այդ իսկ պատճառով կարևոր է, որ գնահատումն իրականացվի սովորողի համար անմիջական, հանգիստ և բնական պայմաններում: Այն պետք է հնարավորություն ընձեռի սովորողի նկատմամբ արդար վերաբերմունքի դրսևորման համար, հիմնված պետք է լինի հավասարության սկզբունքի և օբյեկտիվ գնահատման հիմքի վրա:

ՀՀ հանրակրթությունում այժմ գործում է գնահատման երկու հիմնական ձև՝ միավորային և ուսուցանող (*տես՝ ԿԱՒ-ի կայքում տեղադրված սովորողի ուսումնական առաջադիմության գնահատման երաշխավորություններն ու գնահատման մեթոդական ցուցումները*):

Ամփոփիչ/միավորային գնահատումն ուսումնառության ընթացքում սովորողի ձեռքբերումների մակարդակը թվանշանով արտահայտելն է՝ համաձայն առարկայական չափորոշչի: Ա. Էյնշտեյնն ասել է <<Դասարանում յուրաքանչյուրը հանճարեղ է, բայց եթե դուք ձկանը պետք է գնահատեք ծառի վրայով սողալու կարողության համար, ապա նա ամբողջ կյանքում կտառապի այն մտքից, որ ինքն անկարող է>>:

Միավորային գնահատումը պետք է լինի հնարավորինս օբյեկտիվ և հնարավորություն տա ստուգելու ցանկացած սովորողի իրական կարողությունները: Միավորային գնահատման տեսակներն են.

- բանավոր հարցում,
- գործնական աշխատանք,
- թեմատիկ աշխատանք,

- կիսամյակային ամփոփիչ աշխատանք:

Տնային և կարճ ժամանակի համար նախատեսվող աշխատանքների միավորային գնահատումը պարտադիր չէ:

Ուսուցանող գնահատումը սովորողի կողմից ուսումնական նյութի յուրացման հետ կապված թերըմբռնումների, սխալների ու դժվարությունների բացահայտման և դրանց հաղթահարման, սովորողի մտածողության ու ճանաչողության ոլորտն ընդլայնելու համակարգված գործընթաց է: Հետադարձ կապի կիրառմամբ իրականացվում է ուսումնական գործընթացում տեղեկությունների հավաքագրման և արժևորման միջոցով կրթական չափորոշիչների, ուսումնական ծրագրերի ու դասավանդման մեթոդների բարելավումը: Ուսուցանող գնահատման սկզբունքն է՝ <<Յուրաքանչյուր սովորող կարող է և պետք է առաջ գնա>>:

Ուսուցանող գնահատման մեկ փուլը կարելի է ներկայացնել այսպիսի գծապատկերով.



Ուսուցանող գնահատման ձևեր ու միջոցներ են՝

- հայտորոշիչ թեստ,
- բանավոր հարցում,
- տնային աշխատանք,
- համագործակցային,
- նախագիծ,
- ռեֆերատ կամ ինքնուրույն կատարման ուսումնական այլ առաջադրանք,
- բաց հարցերով քննարկում,
- ինքնագնահատում,
- փոխադարձ գնահատում,
- գործնական աշխատանք, կիրառություն,
- թղթապանակ:

Ուսուցման գործընթացի հաջողությունը մեծապես պայմանավորված է սովորողի վիճակի ճիշտ **հայտորոշմամբ**: Հայտորոշիչ ուսումնասիրման նպատակն է՝ պարզել դասավանդված ուսումնական նյութի կամ հմտության յուրացման գործում սովորողի ձեռքբերումները, թերացումները, թերություններն ու սխալները: Հայտորոշման արդյունքում կիրառվող **հետադարձ կապը** նպաստում է ունեցած տեղեկության հիման վրա սովորողի վիճակի և ուսուցման կազմակերպման բարելավմանը: Այն շարունակական և անընդհատ գործընթաց է: Հետադարձ կապը կարող է լինել բանավոր, գործնական կամ գրավոր աշխատանքների(միավորային և ուսուցանող) արդյունքների քննարկման միջոցով: Սովորողին տրամադրվող հետադարձ կապը պետք է լինի հստակ, հասկանալի, ուղղորդող և ուղղակիորեն կապված լինի իր ուսումնառության հաջորդ քայլերի հետ:

Ուսուցանող գնահատումը պետք է իրականացվի նրբանկատորեն, լինի կառուցողական, քանի որ ցանկացած գնահատում ունի իր հուզակամային ազդեցությունը՝ հատկապես ԿԱՊԿՈՒ սովորողի վրա: Ուսուցիչը պետք է տեղյակ լինի այն ազդեցությանը, որ կարող են ունենալ մեկնաբանությունը, գնահատականը կամ թվանշանը սովորողի ինքնավստահության և խանդավառության վրա և պետք է հնարավորինս կառուցողական լինի իր տրամադրած հետադարձ կապի մեջ: Աշխատանքի և ոչ թե անձի վրա կենտրոնացած մեկնաբանություններն ավելի կառուցողական են և՛ սովորելու, և՛ մոտիվացիայի համար:

Ուսուցանող գնահատումը պետք է հաշվի առնի սովորողի մոտիվացիայի կարևորությունը: Խրախուսող գնահատումը խթանում է մոտիվացիան՝ ավելի շատ շեշտելով առաջընթացն ու հաջողությունները/նվաճումները, քան ձախողումները: Ավելի լավ սովորողների հետ համեմատությունը հազիվ թե դրական շարժառիթ հանդիսանա սովորողների համար: Ուսուցանող գնահատման առանձնահատկությունը, որ դրա միջոցով սովորողն ուրիշների հետ չի համամեմատվում հատկապես կարևոր է դառնում ԿԱՊԿՈՒ սովորողի պարագայում:

Ուսուցանող գնահատումը պետք է նպաստի յուրաքանչյուր սովորողի հնարավորությունների լիարժեք բացահայտմանը և իրենց նվաճումները գնահատելու կարողությունների ձևավորմանը:

Ստուգման տեսակների բազմազանությունը նպատակ ունի տարբեր տեսանկյուններից չափել սովորողի գիտելիքները, կարողություններն ու հմտությունները, որպեսզի արդյունքում ունենանք առավել հավաստի գնահատական:

Հետազոտական համատեքստ

Գնահատականը աշակերտի համար պետք է լինի խրախուսող ,բացահայտի նրա աճը, ուժեղ և թույլ կողմերը , հաջողություններն ու թերացումները: Սովորողին անհրաժեշտ է գնահատել կոնկրետ գործողության համար և գործունեության արդյունքի համար ։

Ուսուցչի համար գնահատումը պետք է լինի աշխատանքը պլանավորելու փոփոխություններն արձանագրելու ,նպատակին հասնելու աստիճանը բացահայտելու միջոց:

Գնահատման համար կիրառվում են տարբեր միջոցներ: Դրանք են՝ բանավոր հարցում,թեստային առաջադրանք , հարցարան,գնահատման սանդղակ:

Ավանդական գնահատումը հնարավորություն չի ընձեռնում աշակերտի մոտ ձևավորել ինքնագնահատումը , գնահատման այս եղանակը անհարմար է աշակերտի համար և բացասական է ազդում նրա մոտիվացիայի վրա:

Սովորողների մոտ պատասխանատվության զգացողություն զարգացնելու , ուսման գործընթացը ճիշտ ընկալելու և սեփական առաջընթացը արձանագրելու համար չափազանց կարևոր է նրանց իրենց իսկ ուսումնառության և գնահատման գործընթացի մեջ ընդգրկելը ։

Սովորողների համար ինքնագնահատումը (ինքնավերահսկողությունը) կարևոր է ուսուցման տարբեր փուլերում ։ Այն հատուկ գործողություն է , որն ուղղված է սեփական հատկություններին ու վիճակներին:

Ինքնագնահատումը կարելի է իրականացնել հետևյալ կերպ:

1. Նախնական ինքնագնահատում , որն արվում է առաջադրանքի կատարման սկզբում ։ Սովորողը պետք է համոզվի արդյոք ճիշտ է հասկացել ուսումնական նյութը, ուսուցչի պահանջները ։

2.Առաջադրանքի ինքնուրույն կատարման փուլում , որում անհրաժեշտ է խրախուսել ինքնահսկումը ։

3.Ինքնուրույն աշխատանքի եզրափակիչ փուլ ։ Այս փուլում ամփոփվում և ստուգվում է ստացված արդյունքները։

Գործունեության ցանկացած փուլում կարելի է զարգացնել ինքնավերահսկողության , ինքնավերլուծության հմտություններ, մղել նրանց ինքնուրույն վերլուծելու և եզրահանգումներ անելու , մտածել լուծման այլ եղանակներ, համեմատել դրանք դասագրքի օրինակների հետ ։

Ինքնագնահատման հմտության ձևավորման մյուս կարևոր պայմանը սովորողների ներգրավումն է փոխադարձ ստուգման և գնահատման տարբեր ձևերի մեջ։ Օրինակ գրավոր պատասխանների փոխադարձ ստուգումը , ամփոփիչ ինքնուրույն աշխատանքի ստուգումն է։ Դասի վերջում կարելի է տալ երեխաներին կարճ հարցաշար, որը թույլ կտա իրականացնել ինքնավերլուծություն, դասի որակական և քանակական գնահատում։ Որպեսզի դասն ավարտվի դրական նոտայով կարելի է օգտագործել« Հաճոյախոսություն» վարժությունը (գործնական ունակությունների հաճոյախոսություններ , գովասանքի,հաճոյախոսություն զգացմունքների), որտեղ սովորողները գնահատում են միմյանց ներդրումը դասի մեջ և շնորհակալություն հայտնում միմյանց և ուսուցիչին դասի համար։ Այս տարբերակը հնարավորություն է տալիս նրանց խոստովանել և գնահատել յուրաքանչյուր անհատի նշանակությունը։

Սովորաբար դասի վերջում ամփոփվում են դասի արդյունքները ,քննարկվում է ի՞նչ են սովորել, և ինչպե՞ս պետք է աշխատեն , այսինքն, յուրաքանչյուրը գնահատում է իր ներդրումը դասի սկզբում դրված նպատակների իրագործման համար ,իր ակտիվությունը դասի ժամանակ ,գործունեության արդյունավետությունը, կատարած աշխատանքի ,ընտրված ձևերի արդյունավետությունը ։Երեխաները մեկ նախադասությամբ արտահայտվում են ընտրելով որպես սկիզբ գրատախտահին գրված արտահայտություններից որևէ մեկը.(Հավելված1)

Գործնական համատեքստ

Հետազոտության խնդիրն է

Սովորողներին դարձնել վերահսկման լիիրավ մասնակից (կանոնների թափանցիկություն)

Բարձրացնել աշակերտների գիտելիքների որակը

Սովորեցնել աշակերտներին ինքնագնահատմնն և ինքնավերահսկողության:

Բարձրացնել նրանց հետաքրքրությունը առարկայի նկատմամբ:

Բարձրացնել սովորողների ինքնուրույնությունն ու ակտիվությունը նյութի ուսումնասիրման ընթացքում:

Դաստիարակել սովորողների մոտ փոխօգնության և համագործակցային ունակություններ:

Փոխադարձ գնահատումը սովորողներ մոտ ինքնավերահսկողության ձևավորման լավ միջոց է ,քանի որ ընկերոջ աշխատանքում սխալներ հայտնաբերեր ավելի հեշտ է քան սեփական աշքատանքում ,իսկ ձեռք բերած հմտությունները աշակերտը փոխանցում է իր գործունեության մեջ(ինքնավերահսկողություն):

Անհրաժեշտ է նաև ,որ աշակերտը դիտարկել իր ուսումնական գործընթացը, իրականացնել ինքնավերլուծություն և ինքնագնահատում:Նրա ինքնավերլուծության և ինքնագնահատման ունակությունից կախված է իր ուսման հաջողությունը , իր ուսուցման նկատմամբ պահանջկոտությունը և ադեկվատ ռեակցիա ուսուցչի կողմից իր գործունեությա գնահատման դեպքում:

Այս աշխատանքի արդյունքում սովորողները կազմակերպում են իրենց գործունեությունը ցիկլերով , պարբերաբար ստուգելով այն:

Ժամանակի փոփոխությունները մարդուց պահանջում են արագ կողմնորոշվելու, հարմարվելու նոր պայմաններին :Նոր տեխնոլոգիաների ներմուծումը իրենց հետ բերել են ռադիկալ փոփոխություններ կրթական համակարգում , առաջ դրա կենտրոնում ուսուցիչն էր իսկ հիմա աշակերտն է:Այդ պատճառով ես գտնում եմ ,որ ուսուցչի գլխավոր խնդիրն է ավելի արդյունավետ ուսուցման ձևերի ընտրությունն է : Առաջնային պայմանը պետք է լինի ուսուցման ընթացքու սովորողների ճանաչողական գործունեության ակտիվացումն է, և ձեռք բերած գիտելիքների և հմտությունների

գնահատումն է ։Առանց ճանչողակողական ակտիվության զարգացման ,ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու և սեփական գիտելիքները և կարողությունները ինքնուրույն գնահատելու չի կարելի լուծել անհատի ձևավորման խնդիրները։

Հետազոտության գաղափարը կայանում էր նրանում ,որ ստեղծվի պայմաններ սովորողների անհատական զարգացման պայմաններ կատարելագործվի սովորողների ինքնագնահատումն ու փոխադարձ գնահատումը։ Սովորողներին առավելագույնս ընդգրկումը ուսուցման պրոցեսի տարբեր տիպի գործունեությունների մեջ նպաստում է ավելի էֆեկտիվ զարգացմանը ինչպես աշակերտի այնպես էլ ուսուցչին։

Իմ գործունեության ժամանակ ես օգտագործում եմ հետևյալ հնարները.

Սովորողներին հանձնարարում եմ կազմել խնդիրներ համադասարանցիների համար,կիրառելով նյութը։Սովորողները միևնույն խնդիրը լուծում են տարբեր եղանակներով, գտնում են առավել արդյունավետ լուծման եղանակը,հայտնաբերում են սխալները նախապես տրված թեստի, գտնում խնդրում առկա ավելորդ կամ պակասող տվյալները։

Հետազոտական աշխատանքի համար ընտրել եմ 7-րդ դասարանը ,քանի որ ուզում էի նրանց մոտ բարելավել կրթության որակը , հենվելով հետադարձ կապի վրա սովորողներին սովորել սովորեցնել, կարողանան ավելի համակարգված և արդյունավետ աշխատեն։

Ձևավորող գնահատման համար տրվել են տարաբնույթ առաջադրանքներ ,թեստային աշխատանքներ ,որոնք վեր են հանել սովորողների ունակությունները, դրանց սիստեմատիկ կիրառումը հնարավորություն կտա հասնել ուսուցման ավելի բարձր որակի։ Ուսուցման տարբեր փուլերում կիրառել եմ տարբեր գտահատման տարբեր մոտեցումներ

- **հասկացությունների քարտեզ**-իրենից ներկայացնում է ցանցային դիագրամ ,որն արտացոլում է գիտելիքների կառուցվածքը որոշակի առարկայական ոլորտում։,ինչպիսին է այն տեսնում աշակերտը ,ուսուցիչը կամ դիտորդը։Քարտեզը կազմված է հասկացությունների անվանումներից ,որոնք տեղադրված են վանդակների մեջ ,որոնք կապված են որոշակի գծերով ,որոնք ցույց են տալիս հասկացությունների միջև եղած կապը՝ գլխավորից մասնակի։

Դիտարկելով քարտեզը գագաթից դեպի հիմք կարելի է պատկերացում կազմել ինչպես են աշակերտները ընկալում գիտական թեման ,

ստուգել ընկալման աստիճանը և նրանց մոտ առաջացած կեղծ սխալ դատողություն-ները ,գնահատել սովորողների մոտ հաստատված կառուցվածքային կապերը

- **ինքնագնահատման սանդղակ (թերթիկ)** այն հանդիսանում է անձի ձևավորման կենտրոնական բաղադրիչներից մեկը, նրա միջուկի մի մասը: Ինքնագնահատումից է մեծամասամբ կախված անհատի սոցիալական հարմարվողականությունը ,այն ազդում է նաև վարքի վրա: Բայց ինքնագնահատումը տրված չէ ի վերուստ, այն փոփոխվում է , ձևավորվում է գործունեության և անձնային փոխհարաբերությունների արդյունքում:Ուստի մեր հիմնական նպատակը պետք է լինի զարգացնել օբյեկտիվ ինքնքգնահատում, որի արդյունքում երեխան կսովորի ոչ միայն տեսնել , արձանագրել դժվարությունը , այլ նաև կսովորի այն հաղթահարել: Աշակերտը պետք է հստակ իր համար որոշի <<Սա գիտեմ, իսկ սա պետք է սովորեմ>>:
    - թեստերի կազմում- սովորողները ինչ –որ թեմայի շուրջ կազմում են թեստի համար հարցեր և հնարավոր պատասխանները քննության համար նախատեսված ձևաչափով : Սա թույլ կտա գնահատել անցած թեման , կատարել անդրադարձ թե ինչ հասկացան և ինչ հարցեր են համապատասխանում թեստի համար:Այսպիսի աշխատանքը թույլ կտա գնահատել հարցերի որակը և կարելի է հարցերը օգտագործել թեման վատ յուրացրած աշակերտների համար :
    - **գնահատման ռուբրիկ**: Աշակերտները պետք է հասկանան ինչ արդյունքներ ենք մենք իրենցից սպասում գնահատման ժամանակ և որ ավելի կարևոր է ինչ չափանիշներից ենք օգտվում: Ռուբրիկները հասանելի ճանապարհ են ապահովում աշակերտների հետ փոխազդեցության և և համատեղ ուսումնական նպատակների մշակում և դրանց հասնելու եղանակները: Հիմնականում այն օգտագործվում է գրավոր աշխատանքների ժամանակ :Ռուբրիկների կիրառումը ապահովում է արտաքին օբյեկտիվ ստանդարտ ,որով համեմատվում են տարբեր աշակերտների տարբեր ձեռքբերումները:

Այս մոտեցումների կիրառելիս վստահ էի յուրաքանչյուր աշակերտը կարող է ավելի լավը դառնալ, ուզում էի ստեղծել համագործակցություն սովորողների և իմ

միջև,սովորողների հետ գնահատականի քննարկումը թույլ կտա պարզել ուսման և դասավանդման ընթացքը ,միասին կսահմանենք պարզ և հասանելի նպատակները , հետադարձ կապի միջոցով սովորողները կորոշեն հետագա քայլերը և թե ինչպես դրանք իրագործեն :

Կարճ վերլուծություն

Վերջին մի քանի րոպեի ընթացքում աշակերտներին տրվում է թերթիկներ և նրանք պատասխանում են հետևյալ հարցերին

1 Որ պահն էր ամենակարևորը

2 որ պահն էր անհասկանալի

Շաբաթվա վերլուծություն

Սա թերթիկ է ,որին նրանք պատասխանում են շաբաթվա վերջում : Հարցերը 3-ն են `

Ինչ սովորեցի այս շաբաթ

Ինչ հարցեր մնացին անհասկանալի

եթե ուսուցիչ լինեի Ինչ հարցեր կտայի աշակերտներին պարզելու համար հասկացել են նյութը

Հետազոտական ընթացք

Հավելված 2 (էջ)

Դասի թեման Կրճատ բազմապատկման բանաձեւերը.

Դասի նպատակը Խորացնել սովորողների գիտելիքները կրճատ բազմապատկման բանաձեւերի մասին. եւ դրանց կիրառությունը վարժություններ լուծելիս:

Սովորողներին ներկայացնում եմ դասի թեման և նպատակները , բացատրում եմ դասի ընթացքը :

Դասի սկզբում կիրառում եմ <<մեկնաբանություններ>> մեթոդը, գրատախտակին գրում եմ շբազմապատկում բառը և սովորողներին հանձնարարում եմ մտածել և մտքեր արտահայտել հետևյալ հարցերի շուրջ:

1. Ինչ ենք հասկանում բազմապատկում ասելով, ապա փորձում ենք գրել կրճատ բազմապատկման բանաձեւերը:
2. Կիրառում ենք վարժությունների լուծման մեջ
3. Լուծում ենք դասագրքի վարժությունները:

Սովորողների առաջնային մտքերը գրում ենք գրատախտակին ,առանց մեկնաբանելու:

Իմաստի ընկալման փուլում ներկայացնում եմ դասանյութը պարզաբանելով աշակերտների մոտ առաջացած հարցերը :

Կշռադատման փուլում հանձնարարում եմ աշակերտներին լրացնել Т –աձև աղյուսակը, (հավելված2) որից զույգերով կատարում են առաջադրանքի աշխատանքների ինքնաստուգում և փոխադարձ ստուգում :

Դաս 2

Դասի թեման Կրճատ բազմապատկման տարբերության քառակուսու բանաձեւը:

Դասի նպատակը ընդլայնելով սովորողների գիտելիքները բազմապատկման գումարման բանաձեւի մասին ՝ գաղափար տալտարբերության բանաձեւի, նրա կիրառության մասին , պատկերացում տալ բանաձեւերի կիրառելիության սահմանների մասին:

Դասի խթանման փուլում կատարում եմ նախորդ դասի վերաբերյալ հարցերի պարզաբանում, դասի հարցումը իրականացնում եմ փոխստուգման միջոցով , աշակերտները փոխադարձ հարցադրման և պարզաբանման միջոցով ստուգում են գիտելիքների յուրացման մակարդակը ուղղելով ընկերների կատարած սխալները:

Իմաստի ընկալման փուլում կիրառում եմ ԳՈՒՍ մեթոդը , աշակերտները լրացնում են աղյուսակի առաջին գիտեմ և ուզում եմ իմանալ սյունակները :

Հանձնարարում եմ ուսումնասիրել նյութը պարբերություն առ պարբերություն առաջացած հարցերը առաջարկում եմ քննարկել ընկերների հետ ,իսկ չպարզաբանված հարցերը դասարանի հետ միասին իմ միջոցով է պարզեցվում :

Սովորողները ինքնուրույն լրացնում են երրորդ սյունակը , լուծում դասագրքի խնդիրները:

Անդրադարձ կատարում եմ հավելված 2-ի հարցերի միջոցով:

Դաս 3 Խնդիրների լուծում

Դասի թեման Կրճատ բազմապատկման գումարի ու տարբերության քառակուսիների բանաձեւերը:

Դասի նպատակը Ամրապնդել գիտելիքները քառակուսիների բանաձեւերի մասին,կրճատ բազմապատկման գումարի ու տարբերության մասին:

Զարգացնել համագործակցային կարողությունները , խմբի աշխատանքում սեփական ներդրում , մտահաղացումներ առաջարկելու կարողությունը ։

Ուշադրություն եմ դարձնում երեխաների տրամաբանական մտածողության և ինքնուրույն աշխատելու կարողությունը զարգացնելու վրա , ստեղծում եմ ինքնագնահատման զարգացման հնարավորություն։

Դասի խթանման փուլում կատարում եմ նախորդ դասի վերաբերյալ հարցերի պարզաբանում , հարցում գնահատում։

Իմաստի ընկալման փուլում կարդում ենք դասագրքի խնդիրը , պարզաբանում պայմանները և պահանջները։

Գրատախտակին գծում ենք աղյուսակ (հավելված 3) և առաջարկում լրացնել այն հետևյալ կերպ ՝ առաջին սյունկում համառոտ գրել խնդրի պայմանները , երկրորդում ՝ խնդրի լուծումը ։ Աշխատում են ինքնուրույն , ես միայն ուղղորդում եմ նրանց։

Խնդիրը լուծելուց հետո գրատախտակի մոտ կանչում եմ գրատախտակի մոտ աշակներից մեկին ,ով ճիշտ է լուծել խնդիրը նա բացատրում է խնդրի լուծումը և գնահատվում։ Տետրում աշակերտները աղյուսակի վերջին սյունակում գրում են ճիշտ լուծումը , մտածում են որն է իրենց սխալը։

Հանձնարարում եմ ինքնուրույն կազմել տարբեր բարդության խնդիրներև առաջարկել դասընկերներին։

Դաս 4

Դասի թեման Խորանարդների գումարի ու տարբերության բանաձեւերը

Դասի նպատակը Գաղափար ձևավորել խորանարդի գումարի մասին , զարգացնել նոր նյութն ինքնուրույն ուսումնասիրելու կարողություն , ինքնագնահատման հմտություն ։

Դասի ընթացքը Խթանման փուլում խթանիչ հարցերի միջոցով դուրս ենք բեռում խորանարդի տարբերության ու գումարի բանաձեւերը։

Որից հետո բացատրում եմ դասանյութը ,այնուհետև հանձնարարում եմ խմբերի կատարել դասագրքում բերված վարժությունները։

Հարցերի միջոցով ամրապնդում եմ դասը, քննարկում անհասկանալի հարցերը , հանձնարարում տնային աշխատանք , որից հետո դասի վերջին հատվածում կատարվում է գործունեության ինքնավերլուծություն ինչպիսին եմ ես խմբում և ինքնագնահատման թերթիկի միջոցով։(Հավելված 3,4)

5. Հետազոտության վերլուծություն

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել սովորողների ինքնագնահատման և փոխադարձ գնահատման ազդեցությունը աշակերտների ներգրավվածության արդյունավետության վրա: Վերլուծելով 1-ին դասը, համեմատելով սովորողների ակտիվությունը և ներգրավվածությունը նախորդ դասերի նկատմամբ՝ գրանցեցի, որ երբ նրանք կատարում էին ինքնագնահատում և փոխադարձ գնահատում աշակերտները ավելի ուշադիր էին , փորձում էին ավելի քիչ սխալվել ,շատ մասնակցել հարցադրումներին և պատրաստակամորեն օգնում էին իրար դասանյութը ավելի լավ յուրացնելու համար, որը նպաստում էր ուսման որակի բարձրացմանը ։Հատկապես ակտիվ էին փոխադարձ գնահատման ժամանակ։ Բայց դժվարությունը այն էր, որ գնահատումը իրականացնում էին սուբյեկտիվորեն ,գնահատում էին ոչ հիմնավորված , հաշվի էին առնում ընկերական հարաբերությունները։ Թերությունն այն էր , որ որոշ աշակերտներ տ-աձև աղյուսակը լրացնելիս օգտվում էին միմյանցից , աշխատում էին ոչ ինքնուրույն ։

2-րդ դասի վերլուծությունը ցույց տվեց, որն ներգրավվածությունը նախորդ դասի համեմատ աճել է, սովորողները սկսել էին ավելի ինքնուրույն աշխատել , զարգացել էր նրանց մոտ ինքնավերլուծությունը, գնահատման ժամանակ փորձում էին հիմնավորել գնահատումը և լինել ավելի օբյեկտիվ։ Բարելավված արդյունքներով սովորողների մոտ մեծ ոգևորվածություն կար, աշակերտների մի մասը համեմատեց իր արդյունքները դասընկերների արդյունքների հետ, զգացվում էր մրցակցային ոգին:

3-րդ դասին վերլուծությունը ցույց տվեցին, որ հարց տվող աշակերտների թիվը ավելացել է սովորողների ինքնավերլուծություն նպաստում էր սովորողները գիտակցված սովորեն Նկատվում է ներգրավվածության ակնհայտ աճ: Սովորողները հասկացել էին, որ խաղի լավ արդյունքները պայմանավորված են ամբողջ դասին ուշադիր լինելով, նոթագրումներ կատարելով, քննարկումներին մասնակցելով, ինչպես նաև անհասկանալի հարցերը բարձրաձայնելով: Նրանց մեծ մասը անում էր ամենինարավորը՝ լավ արդյունք ունենալու համար: Հետաքրքիր էր այն փաստը, որ կային սովորողներ, որոնք իրենց առաջադիմությամբ մինչ հետազոտությունը աչքի էին ընկնում, սակայն այժմ իրենց արդյունքներով գերազանցում էին նույնիսկ բարձր

առաջադիմություն ունեցող աշակերտներին: Դասից դաս աճում էր հետքրքրությունը խաղի նկատմամբ:

4-րդ դասի արդյունքների համաձայն հարց տվող աշակերտների թիվը 17-ն էր, նոթագրողների թիվը 16-ը, ավելացել էր և ակտիվ աշակերտների և նոթագրող աշակերտների թիվը:

Վերջին խաղը ամփոփիչ էր, նպատակ ուներ պարզել՝ արդյոք որպես ձևավորվող գանահատման գործիք այն արդյունավետ է, թե ոչ: Հարցերն այնպիսին էին, որ ստուգում էին և՛կարողություն,և՛ հմտություն, և՛ գիտելիք: Արդյունքներից ակնհայտ էր աճը և՛ ճիշտ պատասխանների քանակով, և՛ ճիշտ պատասխանած հարցերի որակով;

Եզրակացություն

Հետազոտության ընթացքը ցույց տվեց ,որ ինքնագնահատմն և ինքնավերահսկողությունը օգնում է աշակերտին դառնալ ինքնուրույն , բարձրացնում է նրա հետաքրքրությունը առարկայի նկատմամբ, սովորողների ինքնուրույնությունն ու ակտիվությունը նյութի ուսումնասիրման ընթացքում դաստիարակում է սովորողների մոտ փոխօգնության և համագործակցային ունակություններ:

Փոխադարձ գնահատամն արդյունքում ձևավորվեց սովորողների մոտ ինքնավերահսկողության,քանի որ ընկերոջ աշխատանքում սխալներ հայտնաբերել ավելի հեշտ է քան սեփական աշքատանքում ,իսկ ձեռք բերած հմտությունները աշակերտը փոխանցում է իր գործունեության մեջ, այսինքն կատարում է ինքնավերահսկողություն:

Յուրաքանչյուր դասին ունեցած փոքրիկ հաջողությունները ոգևորում էր նրանց հանգեցենում նրան նա առարկան յուրացնելու իր ուժերին: Երբ հավատում ես, որ կարող ես, երբեմն անհնարինը դառնում է հնարավոր,, (Ջեֆ Փեթթի գլուխ 5, ,,Մոտիվացիա,, էջ 6):

Ուսուցչի համար գլխավոր խնդիրը պետք է լինի ոչ միայ գիտելիք փոխանցելը այլ այն գտնելու եղանակներ դրա համար անհրաժեշտ է ընտրնել ուսուցման է ավելի արդյունավետ ձևեր: Ժամանակի փոփոխությունները մարդուց պահանջում են արագ կողմնորոշվելու, հարմարվելու նոր պայմաններին :Նոր տեխնոլոգիաների ներմուծումը իրենց հետ բերել են ռադիկալ փոփոխություններ կրթական համակարգում , առաջ դրա կենտրոնում ուսուցիչն էր իսկ հիմա աշակերտն է:Այդ պատճառով ես գտնում եմ ,որ Առաջնային պայմանը պետք է լինի ուսուցման ընթացքու սովորողների ճանաչողական գործունեության ակտիվացումն է, և ձեռք բերած գիտելիքների և հմտությունների գնահատումն է :Առանց ճանչողակողական ակտիվության զարգացման ,ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու և սեփական գիտելիքները և կարողությունները ինքնուրույն գնահատելու չի կարելի լուծել անհատի ձևավորման խնդիրները:

Հետազոտության արդյունքում հասկացա , որ ապրելով և աշխատելով 21-րդ դարում, որը բարձր տեխնոլոգիաների դար է, պետք է ժամանակին համահունչ քայլել: Լավ

ուսուցիչը միշտ պետք է նոր մոտեցումներ ցուցաբերի դասավանդմանը, կիրառի այնպիսի մեթոդներ և ակտիվ գործիքներ, որոնք կմեծացնեն ներգրավվածությունը, կմոտիվացնեն սովորողներին, դասը կդարձնեն առավել հետաքրքիր և արդյունավետ: Ուսուցիչն իր աշխատանքը պետք է այնպես կազմակերպի, որ աշակերտի համար հետաքրքիր լինի ինչպես բուն դասը, այնպես էլ դասից հետո տրված տնային աշխատանքները, որոնք պետք է լինեն հետաքրքիր, գրավող, ժամանակակից մեթոդնեին և շնչին համապատասխան ՝ հաշվի առնելով յուրաքանչյուր սովորողի անհատականությունը, նախասիրությունը և ուսումնական նյութերի առանձնահատկությունները: Այդ առումով ուսուցչի աշխատանքը մի փոքր դժվարանում է, երբ դասարանը մեծաքանակ է, իսկ առարկայի ժամերը քիչ են: Դա հանգեցնում է նրան, որ հետադարձ կապը ուշանում է, աշակերտի հետաքրքրությունը նվազում է, ինչպես նաև մեծ թվով դասարաններում աշակերտներին ճանաչելու համար բավականին ժամանակ է պետք: Ներկայիս ուսուցիչը պետք է կարողանա լավ տիրապետել ՏՀՏ ոլորտի նորույթներին, նոր ծրագրերին, սմարթ գրատախտակներին, որպեսզի կարողանա հետ չընկնել աշակերտից; Յուրաքանչյուր ուսուցիչ ունի կախարդական փայտիկ և կարող է իր դասն անցկացնել հետաքրքիր, բովանդակալից, յուրահատուկ: Կարևոր է , որ հստակ պատկերացնենք, թե ինչ խնդիրներ ենք ուզում լուծել, ինչ պահանջ կա մեր առջև դրված՝մեր աշխատանքը բարելավելու համար, ինչ նպատակներ ունենք, ինչպիսի ճանապարհներ ենք ընտրում և ինչ վերջնարդյունքներ ենք ակնկալում: Մեր շարունակական և գիտակցված քայլերով բարելավելով մեր դասավանդումը կունենանք ուսումնառության լավ արդյունքով սովորողներ, որոնք հետագայում կլինեն մեր հասարակությանն ինտեգրված լիարժեք անդամները. Չէ որ մեր ապագան կախված է ներկայիս սերնդի լավ կրթված, ճիշտ կրթություն ստացած, ձևավորված արժեքային համակարգով, ինքնուրույն և ստեղծագործ մտածելակերպով անհատներից: